Ալեքսանդր Ծատուրյան

Առաջին համբույր

Զմայլուն հայացքով նայում եմ, ինչպես
Գարնան վառ արփին պայծառ երկնքում
Ժըպտում է և, ջերմ սիրահարի պես,
Երկրին առաջին համբույրն է ղրկում:

Եվ լույս-համբույրից ա՛յնքան խանդավառ
Հուզված ցընցվում է նիրհուն բնություն.
Զարթնում ոգեշունչ նոր կյանքի համար
Եվ զգում իր մեջ մի նոր զորություն:

Հալչում են ձյուներ սարալանջերից
Արագ, անհամբեր վազում դես ու դեն.
Պարտված արևի հըզոր շողերից
Փախչում է ձըմեռն անզոր ու անզեն:

Եվ ես լսում եմ մերձակա ձորից
Ինչպես հորդացած անհանգիստ գետակ
Ազատ վըշշալո՛վ, դուրս եկած ափից,
Կարծես երգում է գարնան հաղթանակ:

Եվ սարալանջից սուրալով հողմիկ,
Գետակի սահուն երեսն է շոյում.
Մեղմ հուզում ջըրեր, օրորում ալիք,

Ու անուշ սուլում դալար ափերում:

Եվ նորաբողբոջ ծաղիկներ գարնան
Գետակի ափին գըրավիչ շարված,
Ժպտում են քընքո՛ւշ, բուրում դուրեկա՞ն,
Հենց նոր արևից լույս համբույր քաղած...

Զմայլուն հայացքով նայում եմ, ինչպես
Կյանքն է նորոգվում բընության կըրծքին.
Եվ ջերմ, հոգեթով օրհնում եմ ես քեզ,
Կենսաբեր գարնան համբո՛ւյրն առաջին: